Հասմիկ Լյովայի Նազարեթյան

Ծնվել է 1996 թվականի նոյեմբերի 3-ին, Շիրակի մարզ, Պեմզաշեն գյուղում:

2014 թվականին ավարտել է Պեմզաշենի միջնակարգ դպրոցը:

2018 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2020 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2022 թվականից հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ:

2020 թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ:

22.11.2018-30.04.2021թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

03.05.2021-01.08.2022թթ. աշխատել է Սահմանադրական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ:

05.08.2022 թվականից առ այսօր աշխատում է «Արատտա Քընսալթինգ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

01.09.2022 թվականից առ այսօր հանդիսանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սահմանադրական իրավունքի ամբիոնի և վարչական իրավունքի ամբիոնի դասախոս:

2024 թվականին մասնակցել է Ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվող գնումների մասնագետի որակավորման քննությանը և որակավորվել է որպես գնումների մասնագետ:

Կատրին Արթուրի Մանուկյան

Ծնվել է 1998 թվականի փետրվարի 20-ին, Շիրակի մարզ, քաղաք Գյումրիում:

2005-2013թթ. սովորել է Շիրակի մարզի, ք. Գյումրու թիվ 29 հիմնական դպրոցում, այնուհետև՝ 2013-2016թթ. սովորել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարանում:

2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2022 թվականին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

05.05.2021-11.08.2021թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

12.08.2021-19.10.2022թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

14.12.2022-12.01.2024թթ. աշխատել է ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության մաքսային գործերի և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես մաքսային տեսուչ:

25.01.2024 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության մաքսային գործերի և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես գլխավոր մաքսային տեսուչ:

ՀՀ ՊԵԿ նախագահի 29.12.2023թ. թիվ 2/9372-Ա հրամանով շնորհվել է «Մաքսային ծառայության լեյտենանտ»-ի հատուկ կոչում:

Նելլի Յուրիկի Վարդանյան

Ծնվել է 1986 թվականի փետրվարի 14-ին, քաղաք Երևանում:

2003 թվականին ավարտել է Երևանի թիվ 37 միջնակարգ դպրոցը:

2007 թվականին ավարտել է Լորիս Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2009 թվականին՝ Լորիս Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

03.11.2014-22.08.2017թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

22.08.2017-02.08.2021թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

02.08.2021 թվականից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:

Քերոբ Լևոնի Պողոսյան

Ծնվել է 1991 թվականի մարտի 6-ին, Շիրակի մարզ, քաղաք Գյումրիում:

1997-2005թթ. սովորել է Մ. Նալբանդյանի անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում, այնուհետև կրթությունը շարունակել է ՀՊՃՀ ԳՄ «Տեմպ» հենակետային վարժարանում և 2007 թվականին ավարտել է:

2007-2011թթ. սովորել և ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» մասնագիտությամբ ֆակուլտետը՝ ստանալով բակալավրի աստիճան:

2016-2018թթ. սովորել և ավարտել է Գյումրու «Հայբուսակ» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, իսկ 2018-2023թթ. սովորել և ավարտել է Գյումրու «Հայբուսակ» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

17.10.2013-05.12.2018թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

05.12.2018 թվականից առ այսօր աշխատում է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2011-2013թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:

Զավեն Գագիկի Սմբատյան

Ծնվել է 1996 թվականի հուլիսի 24-ին, քաղաք Երևանում:

2002-2005թթ. սովորել է Երևանի թիվ 44 դպրոցում:

2005-2010թթ. սովորել է Երևանի թիվ 80 միջնակարգ դպրոցում:

2010-2013թթ. սովորել և ավարտել է Երևանի թիվ 42 ավագ դպրոցը:

2017 թվականին ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2019 թվականին գերազանցությամբ ավարտել է Եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2019-2024թթ. հանդիսացել է Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ:

16.09.2024թ. ՀՀ ԲԿԳԿ իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի որոշմամբ վերջինիս շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

07.02.2018-02.08.2018թթ. աշխատել է «Հողի և ունեցվածքի գործակալություն» ՓԲԸ-ի անշարժ գույքի տեխնիկական գույքագրման, պայմանագրերի նախապատրաստման, մշակման և հաշվառման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

07.08.2018-23.04.2019թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

08.08.2019-07.11.2019թթ. աշխատել է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

07.11.2019-01.03.2021թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

01.03.2021-03.06.2022թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

23.06.2022 թվականից առ այսօր աշխատում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնում՝ որպես բաժնի պետ:

01.09.2024 թվականից առ այսօր համատեղությամբ աշխատում է Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնում՝ որպես դասախոս:

Ունի հրապարակված 2 մենագրություն և 9 հոդված՝ վարչական իրավունքի ոլորտում:

Ամուսնացած չէ:

Էդուարդ Արմենի Խաչատրյան

Ծնվել է 1995 թվականի օգոստոսի 30-ին, Սյունիքի մարզ, Գորիս գյուղում:

2002-2004թթ. սովորել է Կապանի թիվ 1 հիմնական դպրոցում:

2004-2005թթ. սովորել է Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցում:

2005-2009թթ. սովորել է Երևանի Սիամանթոյի անվան թիվ 162 հիմնական դպրոցում:

2009-2012թթ. սովորել է Երևանի Գուրգեն Մարգարյանի անվան թիվ 94 ավագ դպրոցում:

2019 թվականին ավարտել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

10.06.2019-06.11.2020թթ. աշխատել է «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

09.11.2020-01.09.2021թթ. աշխատել է «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ի (ներկայիս «Արեգակ ՈՒՎԿ» ՓԲԸ) գլխամասային գրասենյակի իրավաբանական ծառայությունների բաժնում՝ որպես իրավաբան:

09.09.2021-09.12.2021թթ. աշխատել է Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժնում՝ որպես կրտսեր մասնագետ:

01.02.2022-31.01.2023թթ. աշխատել է «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ որպես իրավաբան:

01.02.2023 թվականից առ այսօր աշխատում է «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավական ապահովման և անձնակազմի կառավարման բաժնում՝ որպես բաժնի պետ:

2014-2016թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Ամուսնացած է:

Արմեն Դերենիկի Մինասյան

Ծնվել է 1983 թվականի հուլիսի 16-ին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում:

1990-1992թթ. սովորել է Հրազդանի թիվ 14 միջնակարգ դպրոցում:

1992-1995թթ. սովորել է Երևանի թիվ 187 միջնակարգ դպրոցում:

1995-1997թթ. սովորել է Գորիս քաղաքի Ակսել Բակունցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1997-1999թթ. սովորել է Երևանի Վարդանանց Ասպետներ կրթահամալիրում:

1999-2000թթ. սովորել և ավարտել է Երևանի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

2004 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020 թվականին ստացել է փաստաբանական գործունեության թիվ 2754 արտոնագիրը:

14.07.2006-17.09.2007թթ. աշխատել է Արդարադատության նախարարության աշխատակազմի դատաիրավական բարեփոխումների վարչության քրեակատարողական ծառայության բարեփոխումների բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

17.09.2007-28.12.2007թթ. աշխատել է Արդարադատության նախարարության աշխատակազմի դատաիրավական բարեփոխումների վարչության քրեակատարողական ծառայության բարեփոխումների բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

07.01.2008-07.07.2008թթ. աշխատել է ՀՀ վերահսկիչ պալատի իրավական վերահսկողության վարչության իրավական աջակցության և դատական ներկայացուցչության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

07.07.2008-27.02.2009թթ. աշխատել է ՀՀ վերահսկիչ պալատի տասներորդ վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ:

27.02.2009-01.12.2009թթ. աշխատել է ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ:

01.12.2009-30.12.2010թթ. աշխատել է ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմի երկրորդ վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ:

30.12.2010-09.04.2018թթ. աշխատել է ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմի երկրորդ վարչությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

09.04.2018-20.07.2020թթ. աշխատել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

20.07.2020-18.08.2020թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներքին աուդիտի վարչությունում՝ որպես խորհրդական, վարչության առանձին գործառույթներ համակարգող:

18.08.2020-19.04.2021թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներքին աուդիտի վարչությունում՝ որպես պետի պաշտոնակատար:

19.04.2021-07.03.2023թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներքին աուդիտի վարչությունում՝ որպես վարչության պետ:

07.03.2023-29.03.2023թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեում՝ որպես նախագահի խորհրդական:

29.03.2023 թվականից առ այսօր աշխատում է «ՍՊԵՑՆԱԶ» ՍՊԸ-ում՝ որպես ավագ իրավախորհրդատու:

ՀՀ ֆինանսների նախարարի 15.10.2021թ. թիվ 559-Ա հրամանով վերջինիս շնորհվել է «Հանրային հատվածի ներքին աուդիտոր»-ի որակավորում:

2004-2006թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Ստացել է «Մաքսային ծառայության գնդապետ»-ի հատուկ կոչում:

Հասմիկ Արայիկի Ջամալյան

Ծնվել է 1988թվականի մարտի 14-ին, Արարատի մարզի Արտաշատ քաղաքում:

1995-2004թթ. սովորել է Հովհաննես Թումանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

2004-2005թթ. սովորել և ավարտել է Արտաշատ քաղաքի թիվ 6 միջնակարգ դպրոցը:

2006-2010թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

2010-2013թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

01.02.2011-12.04.2018թթ. աշխատել է Վարչական դատարանի Վեդու նստավայրում՝ որպես դատավորի օգնական:

05.10.2018-31.10.2022թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

20.07.2023թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում՝ որպես գլխավոր իրավաբան:

2014 թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Աննա Էդուարդի Մանուկյան

Ծնվել է 1986թվականի դեկտեմբերի 22-ին, Շիրակի մարզի Փանիկ գյուղում:

2003 թվականին ավարտել է Փանիկի միջնակարգ դպրոցը:

2007 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2009 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.11.2010-15.03.2013թթ. աշխատել է «ՍԱՖԵԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

02.04.2013-01.02.2014թթ. աշխատել է «ՇԵՄՄ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

24.06.2014-21.12.2016թթ. աշխատել է ՀՀ ՇՄ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

21.12.2016-03.12.2018թթ. աշխատել է ՀՀ ՇՄ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

03.12.2018-04.04.2022թթ. աշխատել է ՀՀ ՇՄ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես բաժնի պետ:

10.01.2023թ.-ից առ այսօր անհատ ձեռնարկատիրոջ իրավական կարգավիճակով զբաղվում է փաստաբանական գործունեությամբ:

2017թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Ամուսնացած է, ունի 3 երեխա:

Սրբուհի Սամվելի Գորոյան

Ծնվել է 1984 թվականի ապրիլի 17-ին քաղաք Երևանում:

2001 թվականին ավարտել է Երևան քաղաքի թիվ 19 միջնակարգ դպրոցը:

2005 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2007 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

06.08.2007-01.01.2008թթ. աշխատել է Տնտեսական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.01.2008-01.12.2010թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.12.2010-02.10.2017թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.10.2017-01.09.2019թթ. աշխատել է «Սամկոն» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

06.09.2019-01.09.2020թթ. աշխատել է «Հայց» փաստաբանական գրասենյակում՝ որպես փաստաբան:

16.09.2020-01.08.2022թթ. իրականացրել է փաստաբանական գործունեություն՝ որպես անհատ ձեռնարկատեր:

12.10.2021-01.08.2022թթ. աշխատել է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես ժամավճարային կարգով հանրային պաշտպան:

01.08.2022թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

2019թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Ամուսնալուծված է, ունի մեկ որդի:

Արմինե Սուրենի Առաքելյան

Ծնվել է 1987 թվականի փետրվարի 24-ին Արագածոտնի մարզի Քուչակ գյուղում:

2004 թվականին ավարտել է Քուչակ գյուղի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցը:

2008 թվականին ավարտել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2010 թվականին

«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2017թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

24.07.2009-01.11.2009թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

20.11.2009-06.06.2011թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում՝ որպես գործավար-օպերատոր:

06.06.2011-26.11.2012թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործերի բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

26.11.2012-03.12.2012թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կոտայքի տարածքային հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

03.12.2012-23.05.2014թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ակցիզային հարկով հարկվող ապրանքների մասնագիտացված մաքսատանը՝ որպես անձնակազմի գծով ավագ մաքսային տեսուչ-իրավաբան:

23.05.2014-18.03.2016թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության ակցիզային հարկով հարկվող ապրանքների մասնագիտացված մաքսատան գանձումների համակարգման և հաշվառման բաժնում՝ որպես անձնակազմի գծով ավագ մաքսային տեսուչ-իրավաբան:

18.03.2016-13.06.2017թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ակցիզային հարկով հարկվող ապրանքների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան գանձումների համակարգման և հաշվառման բաժնում՝ որպես անձնակազմի գծով ավագ մաքսային տեսուչ-իրավաբան:

13.06.2017-02.05.2019թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործի և մտավոր սեփականության պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես գլխավոր մաքսային տեսուչ-իրավաբան:

02.05.2019-01.12.2021թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործերի և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես գլխավոր մաքսային տեսուչ:

01.12.2021թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործերի և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես բաժնի պետի տեղակալ:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

Լյուբա Զոհրաբի Մկրտչյան

Ծնվել է 1985 թվականի հունվարի 20-ին Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքում:
2001 թվականին ավարտել է Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցը:
2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը,
իսկ 2008 թվականին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:
03.11.2008-12.07.2010թթ. աշխատել է ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմում՝ որպես իրավախորհրդատու-փորձագետ:
10.09.2010-20.02.2011թթ. աշխատել է «Լաթար» ԲԲԸ-ում՝ որպես իրավաբան:
21.02.2011-23.05.2011թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:
23.05.2011-23.05.2014թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:
23.05.2014-03.08.2015թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության Աշտարակի տարածքային հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:
03.08.2015-18.03.2016թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության 4-րդ բաժնում (Աշտարակ)՝ որպես առաջատար մասնագետ:
18.03.2016-13.06.2017թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության 4-րդ բաժնում (Աշտարակ)՝ որպես առաջատար մասնագետ:
13.06.2017թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:
Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Ջուլյա Սերգեյի Չիչոյան

Ծնվել է 1988 թվականի մայիսի 2-ին, Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքում:

2004թ. ավարտել է Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը:
2008թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝ գերազանցությամբ:
2010թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:
19.10.2009-10.05.2016թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:
23.08.2021-03.01.2022թթ. աշխատել է Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության քաղաքացիական կացության ակտերի գրանցման և արխիվի բաժնում՝ որպես ավագ իրավաբանի ժամանակավոր պաշտոնակատար:
01.08.2024 թվականից առ այսօր աշխատում է «Սամվել Դիլբանդյան» ԱՁ փաստաբանական գրասենյակում՝ որպես իրավաբան:
Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Նարե Աշոտի Տոնոյան

Ծնվել է 1991 թվականի հունիսի 19-ին, Ուկրաինայի Հանրապետության Լուգանսկ քաղաքում:

1997-2007թթ. սովորել և ավարտել է Վանաձոր քաղաքի Հ. Թումանյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցում:

2007-2011թթ. սովորել և ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետը՝ ստանալով անգլերեն լեզվի և գրականության բակալավրի որակավորման աստիճան:

2011-2013թթ. սովորել և ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «UNESCO»-ի ամբիոնի հանրային կառավարման մագիստրատուրան՝ ստանալով հանրային կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան:

2017 թվականին ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2021 թվականին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

18.12.2014-01.03.2016թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես աշխատակազմի դատական նիստերի քարտուղար:

01.03.2016-09.11.2018թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

09.11.2018-11.03.2024թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

11.03.2024 թվականից մինչ օրս աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Անի Վլադիմիրի Հովհաննիսյան

Ծնվել է 1999 թվականի հունվարի 3-ին, Երևան քաղաքում: 2005-2013թթ. սովորել է Երևանի թիվ 45 հիմնական դպրոցում:

2013-2016թթ. սովորել և ավարտել է Երևանի Գլաձոր ավագ դպրոցը:
2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:
2022 թվականին ավարտել է Հայաստանի ամերիկյան համալսարանի Հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետը, շնորհվել է իրավագիտության մագիստրոսի աստիճան:
02.11.2020-03.03.2021թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:
03.03.2021-08.06.2022թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործերի և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես մաքսային տեսուչի ժամանակավոր պաշտոնակատար:
08.06.2022-14.01.2024թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործերի և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես ավագ մաքսային տեսուչի ժամանակավոր պաշտոնակատար: 25.01.2024թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործերի և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընթացակարգերի բաժնում՝ որպես գլխավոր մաքսային տեսուչի ժամանակավոր պաշտոնակատար:

02.02.2024թ.-ից առ այսօր աշխատում է «Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամում՝ որպես ժամավճարային դասախոս:

09.10.2023թ.-ից առ այսօր ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոն ՊՈԱԿ-ի դասախոս:

Արգիշտի Արթուրի Մեսրոպյան

Ծնվել է 1997 թվականի օգոստոսի 3-ին, Կոտայքի մարզի Զովունի գյուղում:
2014թ. ավարտել է Կոտայքի մարզի Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցը:
2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:
2022 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:
17.08.2020-05.09.2023թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:
01.12.2023թ.-ից առ այսօր աշխատում է «Վիրտուոզ» ՍՊԸ–ում՝ որպես գլխավոր իրավաբան:
29.01.2016-29.01.2018թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Հենրիկ Երվանդի Խունդկարյան

Ծնվել է 1997 թվականի սեպտեմբերի 16-ին, Երևան քաղաքում:

2014 թվականին ավարտել է Ռուբեն Սարգսյանի անվան «Էլիտա» (այժմ՝ Էվրիստա) ոչ պետական միջնակարգ դպրոցը:

2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2022 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2022 թվականից հանդիսանում է Երևանի պետական համալսարանի ասպիրանտ:

19.08.2020-19.10.2021թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակում՝ որպես փորձագետ:

19.10.2021-06.09.2022թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի հետազոտությունների և զարգացման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ:

16.09.2022թ.-ից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանի վարչական պալատում՝ որպես դատավորի օգնական:

31.08.2023թ.-ից առ այսօր համատեղությամբ աշխատում է Երևանի պետական համալսարանի «Իրավագիտություն» ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում՝ որպես դասախոս (դասավանդում է «Աշխատանքային իրավունք» առարկան):

2016-2018թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Նարինե Արարատի Ազարյան

Ծնվել է 1983թվականի հունվարի 17-ին, Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

1998 թվականին ավարտել է Վանաձորի Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը:

2000 թվականին ավարտել է Վանաձորի թիվ 1 վարժարանը:

2005 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

18.09.2006-18.03.2013թթ. աշխատել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի իրավական ապահովման և անձնակազմի կառավարման վարչության իրավաբանական բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

18.03.2013-17.12.2015թթ. աշխատել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

17.12.2015-01.08.2024թթ. աշխատել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի միասնական սոցիալական ծառայության իրավաբանական վարչությունում՝ որպես դատական գործերի բաժնի պետ:

01.08.2024 թվականից առ այսօր աշխատում է Միասնական սոցիալական ծառայության իրավաբանական վարչությունում՝ որպես վարչության պետ:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

Հայկ Գագիկի Վարդանյան

Ծնվել է 1986թվականի սեպտեմբերի 25-ին, Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում:

2003 թվականին ավարտել է Սիսիանի թիվ 1-ին միջնակարգ դպրոցը:

2003-2008 թվականներին սովորել և ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետը՝ դիպլոմավորված:

13.08.2008-25.09.2009թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի քրեագիտության ամբիոնում՝ որպես ուսումնական ասիստենտ, ոստիկանության լեյտենանտ:

25.09.2009-28.07.2010թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության կադրերի վարչության 1-ին բաժնում՝ որպես առաջին բաժանմունքի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ:

28.07.2010-15.05.2012թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժնում՝ որպես տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ:

15.05.2012-18.01.2016թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության իրավաբանական բաժնում՝ որպես տեսուչ, ոստիկանության կապիտան:

18.01.2016-18.10.2018թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության իրավաբանական բաժնում՝ որպես հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր:

18.10.2018-07.02.2019թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության հետաքննության և ճանապարհատրանսպորտային պատահարներով ու տեխնիկական միջոցներով հայտնաբերված խախտումներով վարչական բողոքարկման վարույթի բաժնում՝ որպես բաժնի պետ, ոստիկանության մայոր:

07.02.2019-14.12.2023թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության իրավաբանական բաժնում՝ որպես բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ:

14.12.2023-02.04.2024թթ. աշխատել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության դատական պաշտպանության բաժնում՝ որպես բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ:

02.04.2024-06.09.2024թթ. աշխատել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության վարչական գործերի և դատական պաշտպանության վարչությունում՝ որպես պետ, ոստիկանության գնդապետ:

06.09.2024 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության հաշվառման-քննական ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

2022 թվականից առ այսօր դասավանդում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում, «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով, որպես «Վարչական իրավունք» մոդուլի դասընթացավար:

2011 թվականից հանդիսանումմ է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Ամուսնացած է:

Անահիտ Աշոտի Գալստյան

Ծնվել է 1990թվականի հոկտեմբերի 12-ին, Երևան քաղաքում:

1996-2006 թվականներին սովորել և ավարտել է Երևանի թիվ 195 միջնակարգ դպրոցում:

2010թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝գերազանցությամբ, իսկ 2012թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2018թ.-ից առ այսօր Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ է:

16.12.2011-01.03.2013թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության առանձնացված ստորաբաժանումներում և

կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների կազմակերպման բաժնում՝ որպես բաժնի առաջին կարգի մասնագետ:

01.03.2013-14.02.2022թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական ներկայացուցչության ապահովման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

14.02.2022-15.06.2022թթ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

23.05.2022-16.06.2022թթ. աշխատել է «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնում՝ որպես փորձագետ:

17.06.2022թ.-ից առ այսօր աշխատում է «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնում՝ որպես բաժնի ղեկավար:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Տաթևիկ Արտուշի Կիրակոսյան

Ծնվել է 1988 թվականի հունվարի 4-ին, Երևան քաղաքում:

2006 թվականին ավարտել է ՀՀ կրթ.և գիտ. նախարարության «Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության՝երաժշտության տեսության բաժինը:

2010 թվականին ավարտել է Լորիս Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2012 թվականին ավարտել է Երևանի «Հայբուսակ» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2006-2010թթ. աշխատել է «Խորամանկապարտեզ» ՍՊՀ-ում՝ որպես երաժշտության դաստիարակ:

2007-2012թթ. աշխատել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում՝ որպես Կանաչուտի սբ. Գևորգ եկեղեցու երգչախմբի երգչուհի:

18.07.2012-20.11.2012թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

20.11.2012-19.02.2018թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

19.02.2018-09.10.2023թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

10.10.2023-16.08.2024թթ. աշխատել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Իրավական ապահովման և անձնակազմի կառավարման բաժնում՝ որպես իրավաբան:

2024 թվականի մայիսի 24-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Ամուսնացած չէ:

Արմեն Էդուարդի Հարությունյան

Ծնվել է 1974 թվականի հոկտեմբերի 28-ին, Կիրովական քաղաքում:

1980-1991թթ. սովորել է Կիրովական քաղաքի, Վահան Տերյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում:

2000թ. ընդունվել է «Սանահին» կառավարման ինստիտուտը, իսկ 2001-2004թթ. փոխադրման կարգով տեղափոխվել և ավարտել է «Մխիթար-Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2010թ. ավարտել է Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի իրավագիտության ֆակուլտետը գերազանցությամբ՝ ստանալով «իրավագիտության ուսուցչի» որակավորում:

2012 թվականին ավարտել է Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

27.12.2012թ.-ից հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ, ԺԲ00.02 հանրային իրավունք մասնագիտությամբ, ԲՈՀ–ում հաստատված՝ «Դատական ակտի հարկադիր կատարման վարույթը՝ որպես վարչական վարույթի ինքնուրույն տեսակ» թեմայով:

21.07.2003-12.09.2005թթ. ծառայել է ՀՀ Ոստիկանության ՊՊՎ Վանաձորի ոստիկանության բաժնին կից պահպանության բաժնում՝ որպես ոստիկան:

27.12.2005-17.09.2007թթ. աշխատել է Արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնում՝ որպես հարկադիր կատարող:

17.09.2007-17.11.2009թթ. աշխատել է Արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնում՝ որպես ավագ հարկադիր կատարող:

04.04.2008թ.-ին Երևանի պետական համալսարանի սոցոլոգիայի ֆակուլտետի կողմից ստացել է վկայական առ այն, որ սոցոլոգիայի հեռուսուցման կենտրոնում 10.09.2006թ.–ից մինչև 10.08.2007թ. անցել է սոցիալական աշխատանք և սոցիալական խնամք դասընթաց «սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ:

17.11.2009-01.02.2011թթ. աշխատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնում՝ որպես պետի տեղակալ:

01.02.2011-19.03.2013թթ. աշխատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնում՝ որպես պետ:

19.03.2013-22.01.2014թթ. աշխատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Տավուշի մարզային բաժնում՝ որպես պետի տեղակալ:

22.01.2014-12.07.2016թթ. աշխատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնում՝ որպես պետ:

12.07.2016-12.05.2017թթ. աշխատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ բաժնում՝ որպես պետ:

12.05.2017-15.06.2018թթ. աշխատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնում՝ որպես պետ:

15.06.2018-20.08.2019թթ. աշխատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում՝ որպես ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ:

04.11.2019թ.-ից առ այսօր աշխատում է «ԱՄԻՕ բանկ» ՓԲԸ-ի գործառնական դեպարտամենտի խնդրահարույց ակտիվների վերականգման ծառայության Կատարողական

վարույթներով և սնանկության գործերով խնդրահարույց ակտիվների վերականգնման բաժնում՝ որպես ղեկավար:

2019 թվականից առ այսօր ՆԳՆ կրթահամալիրում պայմանագրային հիմունքներով դասավանդում է վարչական իրավունք առարկան:

2019-2021թթ.-ին պարբերաբար, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի, հանրային ծառայողների ուսուցման և մասնագիտական վերապատրաստման դասընթացներում, դասավանդել է «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ» դասընթացը՝ որպես պայմանագրային հիմունքներով դասախոս:

1995-1996թթ. ծառայել է ՀՀ ՊՆ թիվ 24923 զորամասում, որպես հետախույզ:

2021թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

2023թվականին որակավորվել է, որպես սնանկության գործով կառավարիչ:

Հանդիսանում է 9 գիտական հոդվածների հեղինակ, որոնք տպագրվել են ԲՈՀ-ում գրանցված տարբեր պարբերականներում:

2020-2024թթ.-ի ընթացքում հանդիսացել է ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի, «Ոստիկանական գործ» մասնագիտության, «Պարեկ» որակավորման, վարչական պատասխանատվություն, վարչարարության և վարչական վարույթի հիմունքներ» մոդուլի, պարեկային ծառայության թեկնածուների առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ խմբերի դասընթացավար:

Վահագն Հայկի Թադևոսյան

Ծնվել է 1978 թվականի փետրվարի 2-ին, Երևան քաղաքում:

1994 թվականին ավարտել է Երևանի թիվ 173 միջնակարգ դպրոցը:

2005 թվականին ավարտել է Երևանի «Գալիք» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

2007թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

01.04.2005-01.04.2007թթ. աշխատել է «Կանաչապատում» ՊՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

02.04.2007-18.06.2018թթ. աշխատել է Երևանի Էրեբունի համայնքի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես առաջին կարգի, ապա գլխավոր մասնագետ:

22.06.2018-13.05.2022թթ. աշխատել է «Հայց» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան:

17.10.2022թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ՓԲ հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

1996-1998թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում՝ որպես ժամկետային զինծառայող:

Լուսինե Միշայի Մկրտչյան

Ծնվել է 1984 թվականի հունվարի 6-ին, Երևան քաղաքում:

2007թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի Մենեջմենթի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

01.11.2008-01.06.2010թթ. աշխատել է «Սոֆադ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

15.11.2010-28.12.2012թթ. աշխատել է Վիկտորիա Սթար ՍՊԸ-ում (անվանափոխված «Մուներիս» ՍՊԸ-ում)՝ որպես իրավաբան:

2011թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան

03.2013-02.2014թթ. աշխատել է «ՄԲՄ Լեգիս» փաստաբանական գրասենյակում՝ որպես համահիմնադիր:

04.06.2015-30.04.2016թթ. աշխատել է «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում՝ որպես իրավախորհրդատու-փաստաբան:

2016թ. աշխատել է ԵԱՀԿ և Փաստաբանների պալատի համատեղ ծրագրում՝ որպես փորձագետ:

09.01.2017-02.05.2017թ. աշխատել է «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունում՝ որպես իրավաբան:

02.03.2017թ.-ից առ այսօր անհատապես զբաղվում է փաստաբանական գործունեությամբ:

Մասնակցել է իրավունքի բոլոր ճյուղերին և ենթաճյուղերին վերաբերող տարաբնույթ թեմաներով հատուկ դասընթացներին, միջազգային կոնֆերանսներին, վերապատրաստման

դասընթացներին, սեմինարներին, քննարկումներին՝ կազմակերպված տեղական և միջազգային կառույցների, կազմակերպությունների կողմից:

Առայժմ մեկ գիտական հոդվածի հեղինակ է:

2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին մասնակցել է Փարիզի Փաստաբանների միության կողմից կազմակերպված «Stage International» (Միջազգային պրակտիկա) կրթական ծրագրին (Փարիզ, Ֆրանսիա):

Հատուկ ուսուցում է անցել Փարիզի փաստաբանական դպրոցում:

Պրակտիկա է անցել ‘’Willkie Farr & Gallagher" LLP միջազգային իրավաբանական գրասենյակում (Փարիզ, Ֆրանսիա):

Ամուսնացած չէ:

Եվգենիա Էդուարդի Գյանջումյան

Ծնվել է 1993 թվականի մարտի 12-ին, Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքում:

2009 թվականին ավարտել է Աբովյան քաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոցը:

2013 թվականին գերազանցությամբ ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը:

2015 թվականին գերազանցությամբ ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան:

2017 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

2018 թվականին ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտուրան, շնորհվել է «Հետազոտող. Դասախոս-հետազոտող» որակավորում:

24.02.2014-24.09.2016թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

24.09.2016-23.03.2017թթ. աշխատել է Վարչական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում որպես կրտսեր մասնագետ:

24.03.2017-17.04.2018թթ. աշխատել է Վարչական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում որպես մասնագետ:

18.04.2018թ.-ից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.09.2017թ.-ից առ այսօր համատեղությամբ աշխատում է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի ինստիտուտում՝ որպես քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս:

Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է:

Ամուսնացած չէ:

Նանե Հարությունի Ղազարյան

Ծնվել է 1990 թվականի մայիսի 24-ին, Արարատի մարզի Ազատավան գյուղում:

2006թ. ավարտել է Երևանի Լևոն Շանթի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցը:

2010թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2011թ. ավարտել է Լոնդոնի Միդլեքս համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2012թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2014 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամն, փաստաբան:

15.07.2010-17.08.2010թթ. աշխատել է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում՝ որպես իրավաբանական ծառայության աշխատակից:

01.03.2012-31.05.2012թթ. աշխատել է «Շանտան» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան-խորհրդատու:

07.03.2012-01.06.2012թթ. աշխատել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ում՝ որպես ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետ:

01.06.2012-02.09.2013թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ակտերի մշակման և իրավական փորձաքննության բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ, այնուհետև՝ աշխատակազմի իրավաբանական վարչության քաղաքապետարանի առանձնացված ստորաբաժանումներում և կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների համակարգման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

05.09.2013-07.08.2014թթ. աշխատել է «Շանտան» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան-խորհրդատու:

11.08.2014-01.10.2014թթ. աշխատել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների բողոքարկման և ահազանգման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

01.10.2014-01.04.2015թթ. աշխատել է «Տրևլեքս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

01.12.2014-01.04.2015թթ. համատեղությամբ աշխատել է «Ավտոռենթ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

02.05.2015-14.06.2018թթ. աշխատել է «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

19.06.2018-09.03.2020թթ. աշխատել է Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հայցային աշխատանքների և դատական պաշտպանության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

2015-2016թթ. և 2016-2017թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում՝ որպես դասախոս:

15.07.2016-15.12.2016թ. աշխատել է «Տնտեսահրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ-ում՝ որպես փորձագետ:

01.08.2020-31.10.2021թթ. աշխատել է «ԹԻ ԱՐ ԼՈ ՖԸՐՄ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբանական խորհրդատվության ծառայություններ մատուցող:

08.07.2020-11.08.2023թթ. աշխատել է «Լեմոն Թրի» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:

01.11.2021-10.05.2023թթ. աշխատել է «ԹԻ ԱՐ ԼՈ ՖԸՐՄ» ՍՊԸ-ում՝ որպես ավագ իրավախորհրդատու:

15.08.2023թ.-ից առ այսօր աշխատում է Կադաստրի կոմիտեի իրավաբանական վարչությունում՝ որպես վարչության պետ:

03.10.2024թ.-ից առ այսօր աշխատում է «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամում, որպես դասախոս:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

Աշոտ Տարիելի Հովհաննիսյան

Ծնվել է 1975 թվականի մարտի 31-ին, Երևան քաղաքում:

1992 թվականին ավարտել է Երևան քաղաքի Ալ. Շիրվանզադեի անվան թիվ 21 միջնակարգ դպրոցը:

2004 թվականին ավարտել է Երևանի արտաքին տնտեսական կապերի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2009թ. ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

02.09.1994-22.09.1995թթ. աշխատել է Արդարադատության նախարարությունում՝ որպես ցրիչ:

29.09.1995-11.01.1999թթ. աշխատել է Շենգավիթի շրջանի ժողդատարանում՝ որպես գրասենյակի գործավար:

13.01.1999-01.03.2005թթ. աշխատել է Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում՝ որպես արխիվապահ:

01.03.2005-03.04.2006թթ. աշխատել է «ՀԷՑ» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբանական վարչության Երևան քաղաքի սպասարկման բաժնի «Շենգավիթ» խմբի ղեկավար:

03.04.2006-07.01.2008թթ. նույն հաստիքով փոխադրվել է Անվտանգության և ներքին վերահսկողության տնօրինության իրավաբանական դեպարտամենտ:

07.01.2008-24.03.2008թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար, այնուհետև՝ որպես գրասենյակի գործավար:

09.04.2008-01.10.2008թթ. աշխատել է ՀՀ ԿԱ ՀՊԾ հետաքննության բաժնում՝ որպես մասնագետ:

15.04.2010-30.12.2010թթ. աշխատել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում՝ որպես 1-ին կարգի մասնագետ:

25.08.2011-10.09.2012թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետության դեմ դատական պահանջների պաշտպանության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

01.10.2012-29.11.2013թթ. աշխատել է «Լեգէքս Գրուպ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան:

11.12.2013-31.01.2018թթ. աշխատել է «Իրավունք և օրինականություն» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:

14.06.2018-18.07.2018թթ. աշխատել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնում՝ որպես հետաքննիչ:

18.07.2018-15.02.2019թթ. աշխատել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության թիվ 1 բաժնում՝ որպես հետաքննիչ:

15.02.2019-17.01.2020թթ. աշխատել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության թիվ 10 բաժնում՝ որպես հետաքննիչ, այնուհետև՝ ավագ հետաքննիչ:

17.01.2020-06.04.2020թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության թիվ 11 բաժնում՝ որպես ավագ հետաքննիչ:

06.04.2020-21.07.2022թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության թիվ 22 բաժնում՝ որպես ավագ հետաքննիչ:

21.07.2022-03.01.2023թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության թիվ 3 բաժնում՝ որպես քննիչ:

04.01.2023-25.10.2023թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում՝ որպես երրորդ վարչության քննիչ:

1993-1994թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Լուսիկ Անաստասի Ղուկասյան

Ծնվել է 1988 թվականի դեկտեմբերի 18-ին, Երևան քաղաքում:

2006 թվականին ավարտել է Երևան քաղաքի «Էլիտա» հեղինակային միջնակարգ դպրոցը:

2010 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2012 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.11.2008-31.01.2012թթ. աշխատել է «ՄԱՊ» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

19.06.2012-20.08.2012թ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

13.11.2012-15.05.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

24.09.2013-02.04.2014թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում՝ որպես դատավորի օգնական:

02.04.2014-21.08.2017թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում՝ որպես դատավորի ավագ օգնական:

2016թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

03.10.2017-26.07.2018թթ. աշխատել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամում՝ որպես մասնավոր իրավունքի ոլորտի փորձագետ:

08.11.2019-20.11.2019թթ. աշխատել է Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

20.11.2019-27.12.2019թթ. աշխատել է Առողջապահության նախարարության իրավաբանական վարչությունում՝ որպես իրավախորհրդատու:

27.12.2019-06.05.2021թթ. աշխատել է Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնում՝ որպես գլխավոր իրավաբան:

06.05.2021-11.09.2023թթ. աշխատել է Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության վերլուծության և կատարելագործման բաժնում՝ որպես բաժնի պետ:

12.09.2023թ.-ից առ այսօր աշխատում է «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

02.04.2014թ. շնորհվել է Դատական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Նարե Արթուրի Համբարձումյան

Ծնվել է 1998 թվականի հունիսի 15-ին, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում:

2014 թվականին ավարտել է Վահան Թեքեյանի անվան Գյումրու թիվ 2 ավագ դպրոցը:

2020թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2022 թվականի ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.08.2020-02.10.2020թ. աշխատել է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ում որպես իրավաբան:

08.01.2021թ.-ից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Լիդա Համլետի Մկրտչյան

Ծնվել է 1997 թվականի նոյեմբերի 4-ին, Լոռու մարզի Նորաշեն գյուղում:

2015 թվականին ավարտել է Եվրասիա միջազգային համալսարանի ավագ դպրոցը:

2019 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2021 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2023 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (հանրային ծառայության անցնելու հիմքով փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված է):

01.11.2019-07.03.2020թթ. աշխատել է «Քար Քոլլեքշն» ՍՊԸ-ում՝ (ներկայումս՝ «Ֆասթ Ջասթիս» ՍՊԸ) որպես իրավաբան:

26.08.2020-30.12.2021թթ. աշխատել է «Հայկ Սահակյան» ԱՁ-ում՝ որպես իրավաբան, խորհրդատու:

01.09.2022-30.06.2023թթ. աշխատել է «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում որպես իրավախորհրդատու:

22.09.2023-23.09.2024թթ.աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար:

23.09.2024թ.-ից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:

Աննա Արմենի Մաղաքյան

Ծնվել է 1998 թվականի հուլիսի 22-ին, Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում:

2016 թվականին ավարտել է Արմավիրի մարզի Հացիկ գյուղի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցը:

2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2022թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

03.08.2020-26.09.2022թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար:

26.09.2022 թվականից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ժաննա Աբգարի Մատինյան

Ծնվել է 1997 թվականի օգոստոսի 21-ին, Լոռու մարզի Ալավերդի քաղաքում:

2015 թվականին ավարտել է Լոռու մարզի Շնողի միջնակարգ դպրոցը:

2019 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2024 թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրան:

19.06.2020-25.07.2022թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

25.07.2022թ.-ից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է:

Միեր Աշոտի Կոստանյան

Ծնվել է 1997 թվականի հունիսի 6-ին, Երևան քաղաքում:

2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2022 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

16.01.2020-10.07.2020թ. աշխատել է «Ամերիա» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

10.08.2020-12.10.2021թթ.աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

12.10.2021-09.01.2023թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

09.01.2023թվականից մինչ օրս աշխատում է Սիմոնյան կրթական հիմնադրամում՝ որպես իրավաբան:

Ամուսնացած չէ:

Նարինե Արամի Աբելյան

Ծնվել է 1996 թվականի մարտի 18-ին, Ուկրաինայի Հանրապետության Կիև քաղաքում:

2018թվականին ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2020թ. ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

Ներկայումս սովորում է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտուրայի երրորդ կուրսում: Ավարտական աշխատանքի թեման է «Վերարտադրողական իրավունքները սահմանադրական իրավունքների համակարգում»:

2019թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

01.10.2016-01.08.2017թթ. աշխատել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Հայաստանյան մասնաճյուղում որպես փաստաբանի օգնական:

01.10.2017-01.09.2018թթ. աշխատել է «Արատտա Քընսալթինգ» ՓԲԸ-ում որպես փաստաբանի օգնական:

10.10.2018-28.01.2020թթ. աշխատել է «Արես» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ում նախ որպես փաստաբանի օգնական, ապա՝ փաստաբան:

01.02.2020-30.04.2020թ. աշխատել է «Առլույս» ՓԲԸ-ում որպես ավագ իրավաբան, փաստաբան:

28.07.2020թ.-ից առ այսօր ծավալում է անհատական գործունեություն որպես փաստաբան:

01.06.2022-01.07.2023թթ. համատեղության կարգով աշխատել է որպես Էրեբունի բժշկական կենտրոնի ավագ իրավաբան:

13.11.2023-28.01.2024թթ. հանդիսացել է «Էվոլվ» խորհրդատվական ընկերության ավագ իրավաբան և իրավաբանական թիմի ղեկավար:

Կարինե Սուրենի Բարսեղյան

Ծնվել է 1995 թվականի հունիսի 29-ին, Արմավիրի մարզի Արևիկ գյուղում:

2012 թվականին ավարտել է Արմավիրի մարզի Արևիկ գյուղի միջնակարգ դպրոցը:

2016 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի բակալավրիատը:

2018 թվականին ավարտել է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2019 թվականին ավարտել է «Մարտիգ» Արտաքին տնտեսական կապերի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

12.09.2017-02.03.2020թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

15.05.2020-10.03.2021թթ. աշխատել է «ԲԻԱՅՆԱ ՍՆԱԲ» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան:

17.03.2021-04.11.2022թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

04.11.2022-26.09.2024թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:

Հակոբ Արտակի Թադևոսյան

Ծնվել է 1992 թվականի հունվարի 4-ին, Երևան քաղաքում:

2008 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 84 միջնակարգ դպրոցը:

2016 թվականին ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի շուկայաբանության/մարքեթինգի ֆակուլտետի բակալավրիատը:

2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2022 թվականին ավարտել է Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

02.08.2019-28.07.2021թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցությունում՝ որպես փորձագետ:

01.11.2021-31.05.2022թթ. աշխատել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.03.2023թվականից մինչ օրս աշխատում է Դատական դեպարտամենտի դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչությունում՝ որպես Դատավորների նկատմամբ վարույթներին առնչվող հարցերի բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2010-2012թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: